«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱԼԱՆԻՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 000164, 1 ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՄՆՆԱՀԱՏՈՒՄՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, ՀԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆԻ, ԳԱՐԵՆԻՆ ՆԺԴԵՀԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը 13.08.2029թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 264-25

<< 24 >> նոյեմբերի 2025թ. ՔՊԼ-000164, 1-ին դաս

Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախագծող՝ <<ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Փ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փաստաթղթերի փորձաքննության է դիտարկում << Գյումրու պետական բժշկական քոլեջ>> ՊՈԱԿ -ի հիմնանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերը:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 628 661.91 հազար դրամ , ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 5 էջից:

Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
տնօրեն Ն. Միրեկանյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<< Գյումրու պետական բժշկական քոլեջ>> ՊՈԱԿ -ի հիմնանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթեր

Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախագծող՝ <<ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ

Տնօրեն՝ Փ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն փաստաթղթերը ուսումնասիրել է՝ համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի և ՀՀ -ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

Նախագծի կազմում ներառված է

1. Ճարտարապետական լուծումներ / Գլխավոր հատակագիծ, ընդհանուր բացատրագիր /
2. Կոնստրուկտորական լուծումներ/հաշվարկային մաս/
3. Ինժեներական ցանցեր
4. Շինարարության կազմակերպում

Ընդհանուր բացատրագրում ներառված է նախագծի մշակման հիմքը, հողատարածքի բնութագրերը, տվյալ օբյեկտի նախագծային հզորության, էներգիայի և ջրի ծախսի վերաբերյալ, բնապահպանական միջոցառումների մասին տեղեկություններ, տեղեկություններ ինժեներական ցանցերի և հաղորդակցուղիների վերաբերյալ, բնակչության տեղաշարժման սահմանափակումներով խմբերի կենսագործունեության պայմանների ապահովմանն ուղղված անհրաժեշտ լուծումները, նախագծվող օբյեկտի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Նախագծով նախատեսվում է հիմանանորոգել գոյություն ունեցող երկու հարկանի մասամբ նկուղային հարկով Գյումրու պետական բժշկական քոլեջ ՊՈԱԿ-ի շենքը:

Նախագծով նախատեսվում է ապամոնտաժել գոյություն ունեցող շինության տանիքը , նախատեսվում է գոյություն ունեցող շինությունում քանդել գոյություն ունեցող հատակի շերտերը, պատերի և առաստաղների շերտերը իրենց նախաշերտերով: Իրականացնելով ներքին միջնորմային պատի շարերի վերահատակագծում և ներքին հարդարման աշխատանքներ՝ պատերի և առաստաղների ներկում լատեքսային ներկով, գիպսաստվարաթղթե և պլաստիկե առաստաղների իրականացում մետաղական հիմնակմախքով, նոր հատակների իրականացում : Նոր դռների և պատուհանների տեղադրում: Մուտքերը հարմարեցված են բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժերի համար: Միջնորմերը իրականացվում են թեթևաբետոնե բլոկներով պատի շարով: Գոյություն ունեցող շինության արտաքին հարդարումը նախատեսվում է թարմացնել, վնասված քարերը վերականգնել և մաքրել ավազե շիթով: Նոր լանջավոր տանիքի իրականացում մետաղական տանիքածածկույթով կազմակերպված արտաքին ջրահեռացման համակարգով:

Գոյություն ունեցող շինության հիմնակմախքը իրականացված է կրող պատերով: Իրականացվում է գոյություն ունեցող հիմքերի ուժեղացում, ավելացվող հիմքերը իրականացվում են ըստ տեղամասերի քանդման և բետոնացման աշխատանքների: Նախագծով իրականցավում է նոր երկաթբետոնե միաձույլ երկաթբետոնե շրջանակներ շինության ներսում: Գոյություն ունեցող պատերը աննկյունային նախատեսվում է պատել ե/բ շապիկով: Նոր իրականացվող հեծանները նախատեսվում է իրականացնել ուղղանկյուն հատվածքի ապահովելով խարսխումը: Շինության միջհարկային ծածկերի հարթություններում հորիզոնական կոշտ սկավառակներ ստանալու համար՝ ծածկի սալերի մաքուր մակերևույթի վրա տեղադրվում է պողպատե ցանց, ամրակապելով այն դրանց և ամրանային հիմնակմախքների հետ ՝ բետոնացվում է մանրահատիկավոր բետոնով: Տանիքի ծածկը նախատեսվում է իրականացնել մետաղական հիմնակմախքով՝ ուղղաձիգ և հորիզոնական կապերի իրականացմամբ: Հարկերի միջև տեղաշարժը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե աստիճանավանդակով և վերալակով: Նախատեսվում է կառուցել կցակառույց շինություն միաձույլ երկաթբետոնե շրջանակային հիմնակմախքով:

Շենքի հիմնակմախքի հաշվարկը ուղղահայաց բեռնվածության և սեյսմիկ ազդեցությունների համար կատարված է համակարգչային ծրագրով ըստ ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմերի: Հաշվարկի ժամանակ օգտագործվել է՝

գրունտների կարգը 2-րդ,

գրունտային պայմանների գործակիցը - $K_0 = 1.0$,

թույլատրելի վնասվածքների գործակիցը - $K_1 = 0.6$

սեյսմաուժգնության գործակիցը - A=0.4

պատասխանատվության գործակիցը - $K_2 = 1.3$

տատանումների հիմնական պարբերություններ՝

-երկայնական ուղղությոմբ ---------- T1x=0.078 վրկ

-լայնական ուղղությամբ ---------- T2y=0.072 վրկ

Հիմքի մակարդակում առավելագույն սեյսմիկ ուժերը X և Y ուղղություններով համապատասխանաբար կազմում են 2588.5 և 2634.4 տ:

Հարկերի շեղվածության մեծությունները X և Y ուղղություններով տատանվում են համապատասխանաբար 0.26 մմ և 0.39 մմ սահմաններում:

Հաշվարկների ժամանակ բոլոր երկաթբետոնե կոնստրուկցիաների համար ընդունված են հետևյալ բնութագրերը՝ ծանր բետոն B20 դասի, երկայնական ամրանները A500C դասի, լայնական ամրանները A240 դասի:

Շինության ջրամիացումը իրականացվում է հարակից տարածքում գտնվող պողպատե ջրատարից պոլիէթիլենե խողովակներով նոր կառուցվող ջրամատակարարման հորում: Ջրամատակարարման ներքին ցանցը փակուղային է: Հակահրդեհային անվտանգությունը ապահովելու համար նախատեսվում է տեղադրել հակահրդեհային ծորակներ: Մայրուղային խողովակները և հակահրդեհային կանգնակները նախատեսվում են պողպատե էլ.եռակցվող խողովակներով, տաք և սառը ջրամատակարարման կանգնակները և սպառման խողովակաշարերը պոլիպրոպիլենե խողովակներից:

Կենցաղային կեղտաջրերը սանտեխնիկական սարքերից ինքնահոս հեռացվում են դեպի բակային տարածքում նախատեսված կոյուղու արտաքին ցանց: Համակարգի ներքին խողովակները նախատեսվում է իրականացնել 50 մմ և 110 մմ տրամագծի կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակներից:

Ջեռուցումը նախատեսվում է իրականացնել կաթսայատնից երկխողովականի արհեստական շրջանառությամբ մայրուղային գծերով՝ փակուղային սխեմաներով ջրային ջեռուցման համակարգերով, որպես ջեռուցման սարքեր նախատեսվում են ալյումինե ջեռուցման մարտկոցները: Օդահեռացումը իրականացվում է օդահեռացման փականների միջոցով: Շենքում նախատեսվում է իրականացնել օդափոխության

արհեստական համակարգ, օդի ներածման և արտածման համակարգերի միջոցով և ծխահեռացման համակարգի իրականացում հակահրդեհային պաշտպանության համար:

Ներքին էլեկտրամատակարարման ցանցի սնուցման համար նախատեսվում է կառուցել վահանային սենյակ, որտեղ տեղադրվում է գլխավոր բաշխիչ վահանը, օդափոխության և արտաքին լուսավորության վահանները: Վահանային սենյակից իրականացվում է լուսավորության վահանակների էլեկտրամատակարարումը: Հարկային լուսավորության վահանակներից իրականացվում է հարկի լուսավորության և վարդակների ցանցերի էլեկտրամատակարարման բաշխումը: Լույսի աղբյուր հանդիսանում են LED լուսատուները: Սենյակում ընդհանուր լուսավորության համար նախատեսված է լուսատուների տեղական կառավարում: Նախատեսված է էվակուացիոն լուսավորություն, որը իրականացված է ելքի դռների վերնամասերում տեղադրված էվակուացիոն լույսերի և ելքի ցուցանակների միջոցով: Էլեկտրաէներգիայի ընդհատվելու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով միանում են իրենց մեջ ներկառուցված տեղային անկախ աղբյուրին ապահովելով 2 ժամյա աշխատանքին ռեժիմ, որը բավարար է տարահանման համար: Վահանակները տեղադրվում են հատակից 1.5մ բարձրության վրա, ընդհանուր նշանակության վարդակները և անջատիչները, աշխատասենյակներում, 0.8մ բարձրությամբ, իսկ մյուս տեղերում 1.5 մ: Լուսավորության և խրոցակային վարդակների ցանցը անցկացվում է պղնձե մալուխով, խողովակով: Ներքին լուսավորության և վարդակների էլեկտրամատակարարման ցանցը իրականացվում է 3 լարանոց :

Նախագծված է հրդեհի ահազանգման հասցեավորված համակարգ, որը հնարավորություն է տալիս ճշգրտությամբ, որոշել տեղեկատվություն հաղորդող ազդասարքի տեղը և համապատասխան ձևով արձագանքել առաջացած տագնապի կամ անսարքության ազդանշաններին: Նախագծված հրդեհի ահազանգման համակարգը նախատեսված է հրդեհի օպերատիվ հայտնաբերման, աշխատակիցներին հրդեհի մասին նախազգուշացման, ինչպես նաև տագնապի ազդանանշանի ձևավորման համար: Համակարգն աշխատում է երկու ռեժիմով՝ ավտոմատ միացման և ձեռքով միացման: Տարածքում անցկացվում է տեսահսկման համակարգ, տեղադրվում է անվտանգության տեսախցիկներ:

Նախատեսվում է արտաքին ինժեներական ցանցերի անցկացում՝ ջրամատակարարման և կոյուղու: Տարածքը նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել : Տարածքում նախատեսվում է իրականացնել ասֆալտապատ ճանապարհներ և մայթեր պարփակված մայթեզրերով: Շինության ամբողջ պարագծով իրականացվում է սալվածքներ:

Նախահաշվային մաս

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է 628 661.91 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը 2458.44 և մեքենաների շահագործման ինդեքսը 3048.10

Նյութերի արժեքը ընդունված է 2025թ. N 07 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

4. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

Ուսումնասիրելով ներկայացված նախագիծը

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախագիծը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

Տնօրեն *Ն. Սիրեկանյան*

Փորձագետ *Ա. Խաչատրյան*

Փորձագետ *Տ. Վիրաբյան*

Փորձագետ *Ա. Խաչատրյան*

Փորձագետ *Ա. Վիրաբյան*